ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲԽ-ԷՍ-2018/118

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննելով «ՄԵԳԻԵԼ» ՍՊԸ-ի կողմից 30.11.2018թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. **«ՄԵԳԻԵԼ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«ՄԵԳԻԵԼ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 30.11.2018թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«1. Վեճի առարկան.

1.1 «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության կողմից հայտարարվել է ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8 ծածկագրով գնման ընթացակարգ:

1.2 ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8 ծածկագրով հրավերը հրապարակվել է 23.11.2018թ:

1.3 Հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը՝ 30.11.2018թ:

1.4 Էլեկտրոնային աճուրդի կայացման օրը՝ 03.12.2018թ:

1.5 ԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8 ծածկագրով գնմանը մասնակցելու նպատակով «Մեգիէլ» ՍՊ ընկերությունը (հետայսու՝ Ընկերություն) ուսումնասիրելով հրավերը՝ տեխնիկական բնութագրում արձանագրել է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի կարգավորումների հետ և պարզաբանման նպատակով հարցադում է ներկայացրել պատվիրատուին:

1.6 Հարցդրումները ներկայացվել են 26.11.2018 եւ 28.11.2018թթ. նույն հարցի վերաբերյալ:

1.7 Հարցադրումների վերաբերյալ տրվել են պատասխաններ, որոնք վերաբերելի չեն հարցադրման բովանդակությանը և առարկային:

2.Բողոքի փաստացի և իրավական հիմքերը.

2.1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ Օրենքի նպատակն է ի թիվս այլի «գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ եւ օգտավետ իրականացումը»:

2.2. Համաձայն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի՝ գնումների գործընթացի սկզբունքն է «գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում»:

Պատվիրատուին պարզաբանման նպատակով հարցադրում էր ներկայացվել ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8 ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ, 6-րդ, եւ 7-րդ չափաբաժինների վերաբերյալ, պատճառաբանելով, որ ներկայացված տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջին:

Օրենսդիրը վերը հիշատակված նորմով իմպերատիվ կանոն է սահմանել, որ «Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որեւէ առեւտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը»:

Մինչդեռ, ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8 ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ, 6-րդ, և 7-րդ չափաբաժինների նկարագրով խախտվել է հիշատակված նորմի պահանջը, և այդ չափաբաժիններում համարժեք ապրանքատեսակ ներկայացնելու հնարավորությունից հնարավոր հայտատու ընկերություններ զրկվել են մասնակցելու հայտարարված գնման ընթացակարգին, քանի որ տեխնիկական բնությագրերում շրջանցվել է «կամ համարժեք» եզրույթը:

Պատվիրատուին ներկայացված հարցադրմամբ ակնկալել ենք ստանալ սույնի վերաբերյալ պարզաբանում, սակայն տրամադրված պատասխանները վերաբերվել են նրան, թե ինչ ապրանքատեսակի անհրաժեշտություն ունի պատվիրատուն ներկայումս և հղում է արվել այլ ծածկագրերով հրավերների, որոնց վերաբերյալ պարզաբանում չենք պահանջել:

Այսպիսով, պատվիրատուի կողմից չի տրվել պարզաբանում օրենքի եւ այլ իրավական ակտերի հիման վրա: Պատվիրատուի կողմից օրենքով չառաջնորդվելու արդյունքում խախտվել է ինչպես այլ հավանական հայտատուների, այդ թվում նաև՝ «Մեգիէլ» ՍՊ ընկերության գնման ընթացակարգին մասնակցելու իրավունքը:

Իրավական նորմերի խախտմամբ կազմված և ներկայացված հրավերը չի կարող ապահովել գնումների այն ընթացակարգը, որը նախատեսել է օրենսդիրը «Գնումների մասին» ՀՀ օրենքով և դրանց իրականացման համար ընդունված իրավական ակտերով (ՀՀ կառավարության որոշումներ):

3. Պահանջ.

3.1. Համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲ ընկերությանը ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8 ծածկագրի հրավերով արգելել կատարել որոշակի գործողություններ եւ ընդունել որոշումներ, այն է՝ չանցկացնել գնումների գործընթաց եւ պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշում՝ ներկայացված պարզաբանման առնչությամբ:

3.2 Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բողոքը բավարարվելու դեպքում վերադարձնել բողոքի քննության համար նախատեսված վճարը»:

«Մեգիէլ» ՍՊԸ-ն 10.12.2018թ. Բողոքներ քննող անձին ներկայացրել է Բողոքով ներկայացված պահանջի լրացուցիչ հստակեցում՝ միաժամանակ խնդրելով ներքոշարադրյալ պահանջը բավարարել Բողոքով վիճարկվող՝ գնման ընթացակարգի 2-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով.

«Բողոքի պահանջի 3.1 կետի վերաբերյալ ներկայացնում ենք հստակեցում, այն է՝ պարտավորեցնել պատվիրատուին չկայացած համարելու ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8 ծածկագրով գնման ընթացակարգը:»:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության լիազորված ներկայացուցիչ Անետա Սարգսյանը:

2. <u>«Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 4-րդ մասով՝ Բողոքներ քննող անձը դիմել «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին՝ Բողոքի վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով, նույն հոդվածով սահմանված ժամկետում Բողոքներ քննող անձին

տրամադրել գրավոր դիրքորոշում, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացվել:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Դավիթ Մինասյանը:

3. <u>ԳԲԽ-ԷՍ-2018/118 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է «Մեգիէլ» ՍՊԸ-ի կողմից 29.11.2018թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի լիազորված ներկայացուցչի բանավոր դիրքորոշումը.

Գյումրու բժշկական կենտրոնի կարիքների համար բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Աճուրդ):

Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով սահմանվել են հետևյալ հատկանիշները.

- 2-րդ չափաբաժնով՝ «Կաթետերներ/Ախտորոշիչ կաթետեր» ապրանքատեսակի մասով. «Ախտորոշիչ կաթետեր մուլտիպակ-Հավաքածուն կազմված է երկու Ինֆինիտի ախտորոշիչ կաթետերներից: Չափսերն են 4F, 5F, 6F: Կաթետերների ծայրը JR4, JL4, JL3,5: Նյութը նեյլոն, ունի պողպատյա հյուսապատում, որն օժտում է կաթետերին ամրությամբ–ունի ատրավմատիկ ռենտգենկոնտրաստ ծայր»:

- 6-րդ չափաբաժնով՝ «բալոնային կաթետեր» ապրանքատեսակի մասով. «Բալոնային կաթետր (NC), 0,014", կաթետրի երկարությունը՝ 143 սմ: Բալոնի նյութը՝ Պեբակս: Կրկնակի հիդրոֆիլային ծածկույթ: Բալոնի կրկնակի շերտ՝ 3,5-5,0մմ չափսերի համար: Բալոնի նոմինալ բացման ճնշումը՝ 12 մթն, պայթման առավելագույն ճնշումը՝ 18 մթն, ծայրի պրոֆիլը՝ 0,018" (0.45), ծայրի երկարությունը՝ ոչ ավել 3,74 մմ, շաֆթի պրոքսիմալ/դիստալ մասի տրամագիծը՝ 2,2/2,5F: Շաֆթի մեջ ինտեգրված վոլֆրամային ռենտգեն-կոնտրաստ նշանակիրներ 1,1 մմ երկարությամբ: Տրամագիծը-1.5, 2.0, 2.25, 2.5,2.75, 3.0, 3.25, 3.5, 3.75, 4.0, 4.5, 5.0 մմ, երկարությունը - 6, 8, 12, 15, 20, 25 մմ: ABBOTT Vascular /համարժեք/: Բալոնային կաթետր (RX), 0,014", կաթետրի երկարությունը՝ 145 սմ: Բալոնի նյութը՝ Պեբակս: Արտաքին հատվածում կրկնակի հիդրոֆիլային ծածկույթ և հիդրոֆոբային ծածկույթ՝

կաթետրի հատվածում: Բալոնի կրկնակի շերտի հաստությունը՝ ոչ ավել քան 0,0014" (0.036 մմ) 2,25-5,0մմ չափսերի համար: Բալոնի նոմինալ բացման ճնշումը՝ 8 մթն, պայթման առավելագույն ճնշումը՝ 14 մթն, ծայրի պրոֆիլը՝ 0,017" (0.43), ծայրի երկարությունը՝ ոչ ավել 3մմ, շաֆթի պրոքսիմալ/դիստալ մասի տրամագիծը՝ 2,1/2,4F: Շաֆթի մեջ ինտեգրված վոլֆրամային ռենտգեն-կոնտրաստ նշանակիրներ 1,0 մմ երկարությամբ: Տրամագիծը-1.2, 1.5, 2.0, 2.25, 2.5,2.75, 3.0, 3.25, 3.5, 3.75, 4.0, 4.5, 5.0 մմ, երկարությունը - 6, 8, 12, 15, 20, 25, 30 մմ: ABBOTT Vascular համարժեք:Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս: Ապրանքը պետք է լինի նոր, չօգտաործված, գործարանային փաթեթավորմամբ»:

- 7-րդ չափաբաժնով՝ «բալոնային կաթետեր» ապրանքատեսակի մասով. «Բալոն չընդլայնվող գնդանոթով, կատետերի երկարությունը 145սմ, հիդրոֆիլիկ ծածկույթով, X քոթինգ ծածկույթով աշխատանքային հատվածում, նոմինալ ճնշումը 1216ԿՊա, Մաքսիմալ ճնշումը 2229ԿՊա 2.0-ից 4.0մմ տրամագծով բալոնների համար, 2026ԿՊա 4.5մմ-ից 5.0մմ տրամագծով բալոնների համար: Բալոնները եռաթև են: Մուտքի ծայրի տրամագիծը 0.43մմ:

Կախված վիրահատվող անոթի տրամագծի չափից կաթետերի պահանջվող չափերն են ըստ տրամագծի՝ 2.0; 2.25; 2.5; 2.75; 3.0; 3.25; 3.5; 3.75; 4.0; 4.5; 5.0 մմ:

Կախված անոթի վնասված մասի չափերից կաթետերի պահնջվող չափերն են ըստ երկարության 6մմ; 8.0; 12մմ; 15մմ; 20մմ; 25մմ; 30մմ:

CE սերտիֆիկատի առկայությունը պարտադիր է: Accuforce»:

«Մեգիէլ» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի գնման առարկայի 2-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով Պատվիրատուի կողմից սահմանվել են ձեռքբերվող ապրանքի այնպիսի տվյալներ և պայմաններ, որոնք չեն համապատասխանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ինչի արդյունքում հնարավոր մասնակիցները, այդ թվում նաև Ընկերությունը, փաստացիորեն զրկվում են Ընթացակարգին մասնակցելու հնարավորությունից: «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8» ծածկագրով հրավերի տեխնիկական բնութագրի 2-րդ, 6-րդ, և 7-րդ չափաբաժինների բնութագրերով խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը, և այդ չափաբաժիններով համարժեք ապրանքատեսակ ներկայացնելու հնարավորությունից

հնարավոր հայտատու ընկերություններ զրկվել են, քանի որ տեխնիկական բնութագրերում բացակայում է «կամ համարժեք» բառակապակցությունը:

Բողոքաբերը նշել է նաև, որ Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պայմանների վերաբերյալ 26.11.2018թ. Պատվիրատուին ներկայացվել է հարցում, որով Ընկերությունն ակնկալել է ստանալ պատճառաբանված վերաբերելի պարզաբանում, ինչը սակայն տեղի չի ունեցել: Մասնավորապես, ներկայացված հարցմամբ Ընկերությունը Պատվիրատուի ուշադրությունը հրավիրել էր այն հանգամանքի վրա, որ ապրանքի տեխնիկական բնութագրում առկա են անհամապատասխանություններ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերի պահանջներին, քանի որ գնման առարկայի 2-րդ, 6-րդ և 7-րդ չափաբաժինների բնութագրերում ներկայացվել են կոնկրետ արտադրողին բնորոշ հատկանիշներ ունեցող մոդելներ և էսքիզներ, ընդ որում, նշված բնութագրերում բացակայում է «կամ համարժեք» եզրույթը: 6-րդ չափաբաժնում նշված է «համարժեք» բառը: Նույն հարցմամբ Ընկերությունը խնդրել էր պարզաբանել, թե արդյո՞ք համարժեք գնահատելու հմնարավորությունը տարածվում է գնման առարկայի բոլոր բաղադրատարրերի, նյութերի, պարամետրերի, և այլ հատկանիշների վրա, եթե առաջարկվող ապրանքատեսակը ֆունկցիոնալ առումով հնարավորություն է տալիս հասնել այն արդյունքին, ինչը հնարավոր է ունենալ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրով օժտված ապրանքի օգտագործման դեպքում, և համարժեք կդիտարկվի՞ արդյոք Medtronic ֆիրմայի արտադրության Sprinter ապրանքանիշի NC և RX բալոնային կաթետերները, որոնց միջոցով հնարավոր է իրականացնել նախատեսված վիրահատությունները միևնույն արդյունքին հասնելու համար:

Պատվիրատուի կողմից ներկայացվել է պատասխան, որով տեղեկացվել է Ընկերությանը, որ «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/1» գնման ընթացակարգի շրջանակներում Medtronic ֆիրմայի Sprinter ապրանքանիշի NC և RX բալոնային կաթետերների չափաբաժինները կայացել են, և Պատվիրատուն այլևս չունի տվյալ ապրանքատեսակի գնման պահանջ: Միաժամանակ, պատվիրատուն նշել է, որ տվյալ բալոնային կաթետերների մասով մեկ այլ ընթացակարգի շրջանակներում մասնակցության հայտեր են ներկայացրել մի շարք ընկերություններ, ինչը թույլ է տալիս ենթադրելու, որ տվյալ ապրանքատեսակը նշված ապրանքանիշի մենաշնորհը չի հանդիսանում:

Բողոքի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ բողոքաբերը պնդեց Բողոքի քննության շրջանակներում հայտնած գրավոր դիրքորոշումն ամբողջությամբ:

Պատվիրատուի ներկայացուցիչն՝ անդրադառնալով Բողոքով վիճարկվող չափաբաժինների բնութագրերին առանձին-առանձին, ընդունեց, որ գնման առարկայի 2-րդ չափաբաժնով սահմանված «ախտորոշիչ կաթետեր» ապրանքատեսակն արտադրվում է «CORTIS» ապրանքանիշի կողմից, իսկ բնութագրում նշված «Ինֆինիտի» անվանումը մատնանշում է նշված ախտորոշիչ կաթետերի համապատասխան մոդելը: 4F, 5F, 6F ցուցիչները վերաբերում են կաթետերների չափերին, իսկ JR4, JL4, JL3,5 ցուցիչները ցույց են տալիս կաթետերների կորության աստիճանը:

Անդրադառնալով գնման առարկայի 6-րդ չափաբաժնով նախատեսված «բալոնային կաթետեր» ապրանքատեսակի բնութագրին, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ պեբոքսը կաթետերի նյութն է, իսկ «ABBOTT Vascular» բալոնային կաթետրի արտադրող ընկերության (ֆիրմայի) անվանումն է, և մատնանշեց, որ վերջինս պարունակում է «համարժեք» նշումը, ինչն ընդունվեց նաև Ընկերության ներկայացուցչի կողմից:

Ինչ վերաբերում է գնման առարկայի 7-րդ չափաբաժնով նախատեսված «բալոնային կաթետեր» ապրանքատեսակի բնութագրին, ապա Պատվիրատուի ներկայացուցիչը պարզաբանեց, որ տվյալ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրում առկա «Accuforce» նշումը կաթետրի մոդելի անվանումն է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ նույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝ գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Օրենքի 13-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

- 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը (...).

- 5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցն իրավունք ունի հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց առնվազն հինգ օրացուցային օր առաջ գրավոր պահանջելու հրավերի պարզաբանում: Հարցումը կատարած մասնակցին պարզաբանումը տրամադրվում է գրավոր՝ հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու օրացուցային օրվա ընթացքում:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հրավերով պահանջվող՝ Ընթացակարգի 2-րդ և 7-րդ չափաբաժիններով նախատեսված գնման առարկաների բնութագրերում նշված են կոնկրետ մոդելների անվանումներ, որոնք չեն պարունակում «կամ համարժեք» բառերը, իսկ Ընթացակարգի 6-րդ չափաբաժնով նախատեսված «բալոնային կաթետեր» ապրանքատեսակի բնութագրում նշված է արտադրողի (ֆիրմայի) անվանումը, որը պարունակում է «համարժեք» նշումը:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ Ընկերությունը Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պայմանների վերաբերյալ 26.11.2018թ. Պատվիրատուին ներկայացված հարցման շրջանակներում վերջինիս խնդրել է պարզաբանել, թե համարժեք կդիտարկվե՞ն արդյոք Medtronic ֆիրմայի արտադրության Sprinter ապրանքանիշի NC և RX բալոնային կաթետերների բնութագրերը Ընթացակարգի Հրավերով պահանջվող գնման առարկաների բնութագրերին, թե՝ ոչ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Հանձնաժողովը՝ հաստատելով «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի հրավերով նախատեսված գնման առարկայի 2-րդ և 7-րդ չափաբաժինների բնութագրերը, խախտել է

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջները:

Բողոքներ քննող անձը գտնում է նաև, որ Ընկերությունը՝ Հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պայմանների վերաբերյալ Պատվիրատուի գնահատող հանձնաժողովին ներկայացված հարցմամբ ակնկալել է ստանալ իր կողմից առաջարկվող ապրանքատեսակի և Հրավերով սահմանված գնման առարկայի համարժեքության վերաբերյալ պարզաբանում, սակայն Հանձնաժողովի կողմից տրված պարզաբանումը ըստ էության վերաբերելի չէ կատարված հարցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետով՝ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1.«ՄԵԳԻԵԼ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված Բողոքներ քննող անձին 30.11.2018թ. ներկայացրած բողոքը բավարարել մասնակի:

2. Պարտավորեցնել «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին ընդունել՝ «ԳԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-18/8» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգը 2-րդ 6-րդ և 7-րդ չափաբաժինների մասով չկայացած համարելու վերաբերյալ համապատասխան որոշում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ